

**ՄԻՔԱՅԵԼ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԶԱՊԱՀՅԱՆԻ
ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՀՍԿՄԱՆ ԳԻՇԵՐԸ**

(1 ապրիլի, 1999 թ.)

*«Եւ էր գիշեր»:
(«Եվ գիշեր էր»):
(ԴՈՎԴ. ԺԳ 30)*

«Յանուն Գօր եւ Որդւոյ եւ Գոգւոյն Սրբոյ, ամեն»:

Պերճախոս, կերճաբան, աստվածաբան ավետարանիչը Գիսուսի մատնութեան մթնոլորտը և միջավայրը ներկայացնում է սոսկ այս երկու բառով. և գիշեր էր: Աստվածաբան Գովհաննեսը մանրամասն մեզ է ներկայացնում Աստվածորդու վերջին օրերը: Երկար շարադրում է Աստվածորդու՝ մեզ փոխանցած պատգամները, ներկայացնում Գիսուսի և իր առաքյալների ողջ երկխոսությունը, վերլուծումներ և դիտողություններ կատարում տեղի ունեցած իրադարձությունների մասին և սակայն Գիսուսի մատնության միջավայրն ու մթնոլորտը բնութագրում է սոսկ այս բառերով. և գիշեր էր:

Գուդան վերջին ընթրիքի ավարտին, Գիսուսի սիրո արտահայտություններն ընդունելուց հետո, ուրիշ բան չունեցավ անելու, եթե ոչ դուրս գալու և հեռանալու Գիսուսի ներկայությունից: Եվ, այո՛, գիշեր էր, որովհետև պետք է տեղի ունենար մատնություն, գիշեր էր, որովհետև դավաճանության ոճիր պետք է գործվեր, գիշեր էր, որովհետև սիրո փոխարեն ատելությամբ պետք է փոխհատուցվեր, գիշեր էր, որովհետև ոճրագործը գիշերվա մթության քողի տակ է սողոսկում և գիշերվա մթության քողի տակ է իր մութ և սև գործը կատարում: Ինչպես Գիսուս ասաց՝ *«քանզի մարդիկ սիրեցին խավարն առավել, քան զլույս, որովհետև իրենց գործերը չարության գործեր էին»:*

Գուդան մատնելու էր իր Վարդապետին: Որպես կատարյալ մի դեղասան և կեղծավոր՝ նա թաքցնում էր իր ողջ էությունը բոլոր ընկերներից՝ առաքյալներից, ներկայանում էր որպես հավատարիմ ու հավատավոր աշակերտներից մեկը, և որպեսզի կատարեր սև մատնության գործը, իրեն մթություն և գիշեր էր հարկավոր: Այդ իսկ պատճառով երբ թանձր խավարն իջավ Պաղեստինի վրա, Գուդան շտապեց: Շտապեց՝ իր սև գործը կատարելու, շտապեց՝ մատնելու իր Վարդապետին, շտապեց՝ սիրո փոխարեն ատելությամբ հատուցելու:

Եվ գիշեր էր: Սակայն աստվածաբան ավետարանչի այս տողերի ետևում սոսկ բնության երևույթ չէ, որ նկարագրվում է, ավելին՝ ավետարանիչը լուծում է բնության երևույթների և եղանակի մասին: Մենք չգիտենք՝ փոթորկո՞ւտ էր այդ գիշերը արդյոք, թե՞ անձրևոտ, լուսի՞ցն էր շողում երկնքում, թե՞ ամպամած էր: Աստվածաբան ավետարանչի համար այդ չէր կարևորը, որովհետև «գիշեր էր» արտահայտությունն ավելի քան պերճախոս և ավելի քան խոսուն է, որովհետև

Հոգիանճես ավետարանիչը՝ աշակերտը, ում սիրում էր Հիսուս, ուզում է ցույց տալ, որ Հիսուսից բաժանումը ոչ այլ ինչ է, եթե ոչ քայլ դեպի մթություն, քայլ դեպի գիշեր, քայլ դեպի խավար: Եվ Հուդան կատարեց այդ քայլը: Կատարելով այն՝ ոչ թե սոսկ խորասուզվեց բնության ստեղծագործած գիշերվա մթության մեջ, այլ խորասուզվեց իր հոգու գիշերվա և մթության մեջ, որովհետև հեռացավ Հիսուսից: Եվ ահա այստեղ է, որ կա մեկ այլ գիշեր՝ հոգու գիշերը, մտքի և սրտի գիշերը: Հիսուսից հեռացման ամեն մի քայլ տանում է դեպի այդ խավարը, տանում է դեպի այդ մթությունը և տանում է դեպի կորուստ:

Եվ գիշեր էր: Դարեր անցան Հիսուսի մատնության և չարչարանքից հետո: Շարունակաբար նորանոր Հուդաներ գիշեր փնտրեցին և գիշեր երազեցին՝ իրենց սև գործը կատարելու համար: Երկու հազար տարի շարունակ աշխարհը և այս աշխարհի իշխանը շղաղարեցին նորանոր Հուդաներ ծնել և ուղարկել մարդկանց մեջ՝ սև գործ անելու, քայքայելու համար սերը և բարությունը, լուսի փոխարեն մթություն ցանելու: Սակայն մոռացան խոսքն աստվածային այդ բոլոր հին ու նոր հուդաները, թե՛ «Իժի՛ ծնունդներ, ինչպե՛ս եք փախչելու զհենի դատապարտությունից»:

Եվ գիշեր էր: Այո՛, գիշեր էր Հայաստան աշխարհում յոթանասուն տարի շարունակ, և յոթանասուն տարի շարունակ Քրիստոսին հարյուրամյակներ պաշտած ժողովուրդն ուրացել էր, ուրացության ու մատնության ուղին էր բռնել: Յոթանասուն տարի շարունակ գիշեր էր Հայաստան աշխարհում: Գետո այդ յոթանասուն տարին անցավ: Այդ յոթանասուն տարուց հետո անցավ ևս տասը տարի: Սակայն Հայաստանում, Հայոց աշխարհում այսօր դարձյալ և վերստին գիշեր է: Դարձյալ և վերստին գիշեր է, որովհետև այսօր մատնության և չարչարանաց այս խորախորհուրդ պահը մեր ժողովրդի բազմաթիվ զավակներն ապրում են ոչ այն զգացումով ու ոչ այն ապրումով, ոչ այն հոգեվիճակով, ինչով ապրեցին իրենց նախնիները երկու հազարամյակ շարունակ: Այսօր ամբողջ օրը, առավոտյան ժամերգությունից սկսած, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր կամարների տակ հրավիրեց հայորդիներին: Առավոտյան նշվեց Վերջին ընթրիքի արարողությունը, ոգեկոչվեց հիշատակը Հաղորդության Սուրբ խորհրդի հաստատման, և Մայր Տաճարը կիսադատարկ էր: Երեկոյան Ռոմվայի արարողությունը տեղի ունեցավ. Հիսուսի խոնարհության, ամենկնեի խոնարհության մի արտահայտությունը, և այդ արտահայտության հիշողությունը: Եվ շատերը եկեղեցում չէին: Այսօր, գիշերվա այս պահին, եկեղեցին լեփ-լեցուն է: Սակայն շատերը չեն եկել այստեղ Հիսուսի մատնության և չարչարանքի խորհուրդն ապրելու, այլ եկել են, որովհետև... գիշեր է, եկել են, որովհետև իրենց գայթակղել է գիշերվա խավարի և մթության իրողությունը: Եկել են ամեն տեսակ վատ, չար մտածումներով, եկել են խանգարելու հավատացյալների աղոթքը, խոկումը և բաժնեկից են այն մատնիչ Հուդային, որ, քրեորով և սրբորով զինված ամբոխի հետ երկու հազար տարի առաջ, գիշերվա մթության քողի տակ, մոտեցավ Վարդապետին և համբուրելով մատնեց Նրան:

Հիսուսի մատնության և չարչարանաց խորախորհուրդ պահն ապրվում է աղոթքով, ապրվում է աղոթքի մեջ եղող սարսուռով, որովհետև Հիսուս այսօր մատնվում է և չարչարվում մեզ համար: Սակայն մեզանից շատերն այսօր էլ

ապրում են նույն այն գիշերը, որ ապրեցին Գուդան և իր նմանները: Այսօր մեզանից շատերը շարունակում են ուրանալ Գիսուսին, շարունակում են ապրել մատնության այս պահը՝ Գիսուսին մատնող ամբոխի հետ միասին:

Սակայն Ավետարանը սիրո Ավետարան է: Սենք Գիսուսի սիրո Ավետարանն է, որ փոխանցում ենք ամենքին՝ անկախ այն բանից և այն մտածումից, թե ինչն է մղել մեր ժողովրդի այս կամ այն զավակին այս պահին ոտք դնելու եկեղեցու սրբազան շենից ներս, որովհետև Գիսուսի վերջին պատգամն ուրիշ բան չէր, եթե ոչ՝ «սիրեցե՛ք միմյանց»:

Ավետարանական ճշմարտության լույսի տակ մենք տեսնում ենք, որ այսօր, այս գիշեր, Գիսուս մատնվում է աշխարհի կողմից, Գիսուս լքվում է աշխարհի կողմից, Գիսուս դավաճանվում է աշխարհի կողմից, սակայն չի մատնում ոչ ոքի, չի լքում մեզանից ոչ մեկին, ինչպես երեկ, այնպես էլ այսօր չի դավաճանում մեզանից որևէ մեկին: Եվ այսօր, գիշերվա այս խորախորհուրդ պահին, մենք՝ ժողովուրդ Դայոց, պետք է այդ սիրո, այդ գթության և այդ ողորմության շարժառիթներով մոտենանք և ըմբռնենք խավարման այս երեկոն, խավարման այս գիշերը, որովհետև քիչ անց եկեղեցու լույսերը կվառվեն, և այն մարդիկ, ովքեր խավարի համար էին եկել եկեղեցի, լույսի առաջին խկ բռնկումից հետո, խավարասերների նման, կթողնեն եկեղեցին, և կմնան միայն նրանք, ովքեր լույսի համար են եկել, ովքեր եկել են այս խավարի մեջ լույս քաղելու Գիսուսից, որովհետև այս խավարից հետո կարողանում են տեսնել Գիսուսի Դարության արշալույսը:

Եվ մենք՝ ժողովուրդ և հավատացյալներ Դայոց, այս պահին ծնկում ենք Գիսուս Զրիստոսի անմեկնելի չարչարանքների առջև, աղոթում և հայցում ենք Նրա ողորմությունը: Տե՛ր Գիսուս Զրիստոս, Որդի՛ Աստուծո, Դո՛ւ, որ խաչվեցիր մեզանից, Դո՛ւ, որին մենք մատնեցինք, Դո՛ւ, ում մենք շարունակում ենք ուրանալ Պետրոսի նման, մի՛ լքիր մեզ, մի՛ մատնիր մեզ չարի ձեռքը, մի՛ թող մեզ, որ սայթաքենք այս աշխարհում: Այո՛, գիտենք, հաճախ ուրանում ենք Քեզ, հաճախ մոռանում ենք Քեզ, սակայն չենք ուզում լինել մատնիչ Գուդայի կողմնակիցների մեջ, այլ ուզում ենք լինել Պետրոսի նման՝ ուրացող, սակայն ոտքի կանգնող, Քո անմեկնելի արդարության և գթության մասին մտածող: Փորձում ենք քայլել Քո ճանապարհով, օգնի՛ր և գթա՛ մեզ, ցույց տուր մեզ այն ճանապարհը, որ Դու ես: Տո՛ւր մեզ այն կյանքը, որ Դու ես: Մեր սրտերի և հոգիների առջև բացիր այն լույսը, որ Դու ես: Եվ ուրիշ աղոթք չունենք առաքելու Քեզ, ուրիշ խունկ չունենք ծխելու դեպի Քեզ, եթե ոչ այս պարզ և երբեք չմաշվող խոսքերով ենք փորձում դիմել քեզ. Տե՛ր Գիսուս Զրիստոս, Որդի՛ Աստուծո, ողորմյա՛ մեզ՝ մեղավորացս. ամեն: